

ներէ մասին, իսկապէս ոչ միայն ոչինչ նոր բան չէ աւելացնում մեր ունեցած տեղեկութիւններին, այլ անգամ աւելորդ կրկնութիւն է բազմաթիւ անգամ ծամծամած եզրակացութիւններէ: Դեռ 1881 թուին հանգուցեալ գիտնական էմինը հրատարակել է մի շատ լուրջ յօդուած «Моисей Хоренский и древний эпосъ армянскій» հին հայ բանահիւտութեան մասին, որից յետոյ համարեա նոր բան ասող չէ եղել: Մկրտիչ Էմինից յետոյ պ. Խալաթեանը. գիտնական Մառը, գեր. Բարդ. Եպիսկոպոսը և մանաւանդ աւելի մանրամասնօրէն «Հայ ժողովրդական առասպելներ» գրքի մէջ պ. Աբեղեանը շատ աւելի լուրջ դիտողութիւններ ունին արած Երուանդեան Տիգրանի, Արտաւազդի, Արտաշէսի և Սաթիւնիկի ու Վարդգէսի մասին աւանդած երգերի նկատմամբ: Մասիսի քաջքերը, որ բռնեցին Արտաւազդին ազատ Մասիսի վերայ, Վահագնի ծննդեան նկարագրութիւնը «երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով» երգով, Արտաշէսի հարսանիքի և Սաթիւնիկի փախցնելու մասին «Հեծաւ արի արքայն ի սեւան գեղեցիկ» առասպելը—ահա բոլոր փշրանքները, որ մեր մատենագրութիւնը պահել է ժողովրդական հին բանաստեղծութիւնից: Եւ եթէ ոչ ոք մի նոր բան չունի ասելու այս մնացորդների մասին, իրաւ աւելորդ է կրկնութիւններով զբաղեցնել ընթերցողի ժամանակը: Ահա այս հանգամանքը թող չվրիպէ մեր գրողների ուշադրութիւնից և հայերէն գրքերի տարածման արգելառիթ հանգամանքներին թող չաւելացնեն մի նոր դժուարութիւն—վատ գրքեր:

Գ. ԵՆՆ

Աղա Նեգրիւր ըանաստեղծութիւններ: II Պրակ: Թարգմ.
Յ. Յակովբեան. 1904

Իտալական բանաստեղծուհու մասին «Լուսման» արդէն առել է տեղեկութիւն իւր ընթերցողներին նայն պ. Յակովբեանի Թարգմանութեան առիթով: Ներկայ երկրորդ պրակը պարունակում է Աղա Նեգրու 28 աւելի կենսական և հիւթալի ոտանաւորներ:

Ազա Նեղրին տենդենցիօզ բանաստեղծ է: Նրա երգերի գաղափարը բանուոր դասի դաժան կենցաղն է իւր ողբերգական բովանդակութեամբ: Մի հեղինակ, որ իւր ոգևորութեան աղբիւրը մարդկային ամենաթշուառ շրջանների մէջ է գտել, շատ դիւրին կարող է հռչակ և ժողովրդականութիւն վաստակել: Տենդենցիան հեղինակի համար ամենակարճ ուղին է դէպի ամբոխի սիրտը: Ամբոխը տենդենցիայի երկրպագու է: Կան արևնոտ վերքեր, որոնց յանձնարարելու կարիք չը կայ և երբ բանաստեղծը այդ վերքերի մասին է խօսում, կարող է ապահով լինել, որ շատ շուտ կարժանանայ ծափահարութեան: Լուրջ տաղանդները խոյս են տալիս աղաղակող քաղաքական կամ հասարակական խնդիրներից, նրանք աշխատում են մարդկային հոգու խորքերը ուսումնասիրել և աւելի երկարատև, աւելի բարդ վերքեր ասպարէզ հանել: Նրանք գեղարուեստական ճամբարութիւնը չեն գտնում նախագրեալ, բռնագրօսիկ իդէալի, որպէս զի շահագործեն ամբոխի զգացումները: Նրանք արհամարում են «կարճ և դիւրին» ճանապարհը դէպի հռչակ և և ժողովրդականութիւն, թողնելով այն սակաւարին տկարներին համար:

Ազա Նեղրին լինելով տենդենցիօզ բանաստեղծ, գերծ է այդ տեսակի բանաստեղծների գլխաւոր թերութիւնից—շուտ թաւաճող գափնիներ վաստակելու տենչից: Նա դափնիների հրապոյրով հարբած չէ: Նա երգում է ամբոխին մատչելի մօտիւններ, որովհետև մանկութիւնից նրա ականջներն այդ մօտիւններին են սովոր: Եւ նա անկեղծ է, ուրեմն և իսկական բանաստեղծ: Նա նկարագրում է մանկութիւնից իւր աչքերով տեսած, ուսումնասիրած ցաւեր: Նա ունի այն, ինչ որ չունի տենդենցիօզ գրողների մեծամասնութիւնը—չափաւորութեան զգացում: Նա մարդկային դժբաղաւ տարրերի առանց այն ևս շատ յուզիչ, շատ տխուր վշտերը չի ուռեցնում պարսկական դերվիշների նման փրփուրը բերին, այլ երգում է բնական ձայնով, անկեղծ: Ահա ինչու նրա երգերը գեղարուեստական են: Նա նախ և առաջ բանաստեղծուհի է, ապա գաղափարի ծառայող:

Մի քանի ոտանաւորներ ուղղակի յուզում են ընթերցողին և խորը տպաւորութիւն թողնում նրա սրտի վրայ: «Հըրդեհը հանքերում» սոսկալի է իւր զօրեղ նկարագրութեամբ: Հեթանոսական համբոյրը, «Միայն Քեզը» և «Մռայլ ոգով գը-

ըսած «Մառախուղը» իսկական բանաստեղծութիւններ են, համամարդկային նշանակութիւն ունեցող: «Ինչո՞ւ»-ն իրականութեան ճիշտ դրոշմն է կրում: «Մինչև մահ և լետոյ» բանաստեղծութեան անձնական տենչանքներն են արտայայտում: «Մանուշակը» կանացի քնքոյշ հոգու թեթև հառաչանք է:

Մեր ազգային վէրքերը խռփոտութեան հասնող բարձր ձայնով երգողները կարող էին շատ բան սովորել Ադա Նեգրի-ից: Գուցէ ճշմարիտ բանաստեղծահին նրանց ներշնչէր փոքր ինչ չափաւորութեան զգացում, առանց որի չի եղել և չի կարող լինել իսկական գեղարուեստ:

Թարգմանիչը յաջողել է դժուար զործը գովելի ձիրքով: Նրա բանաստեղծական աւիւնը շատ տողերում են զգացւում: Առհասարակ, պ. Յակովբեանը իրրև բանաստեղծութիւններ վերարտադրող պէտք է պատուաւոր տեղ բռնի մեր գրականութեան մէջ, Նրա ոճը բունազրօսիկ չէ, գունաւոր է, ճիշտ է թէև տեղ տեղ նկատուում է յարմար բառերի ընտրութեան ջանք, բայց ոչ այնչափ, որ վնասի Թարգմանութեան սահունութեանը:

Դրքոյկը բաղկացած է 62 փոքրագիր էջերից և արժէ 30 կոպ: Թանգ է, բայց տպագրութիւնը շատ մաքուր է և թուղթը չքեղ:

Ծ.

Ստացուած գրքեր

Գ. Մաղաքեան. Բժշկականութիւն և հասարակութիւն. Թիֆլիզ 1904.

Մակար եպս. Բարխուտարեանց. Աստուածային հրահանգ հանրապարտուց. Թիֆլիզ 1904.

Վ. Փափագեան. Խելօք աքաղաղներ և դրախտը, Թիֆլիս 1904.

Գ. Բ. Պետրով. Բարի սերմեր. Թարգմ. Մամբրէ Վ. Վաղարշապատ 1904.

Միխ. Իւչկեվիչ, Տեսակցութիւն, Թարգմ. Ա. Գրիգորեան. Թիֆլիս 1904.

Դէնորգ Ղասապեանց. Գալուստի և Շուշանիկի պատկուելը. Ալեքսանդրապոլ 1904.

Հայ Ժողովրդական երգեր. Ժողովեց, ձայնագրեց, ներդաշնակեց Գր. Միրզայեան. Հրատ. բժ. Ա. Բուդուղեանի. Ա. Պ. Բ. 1904.